**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐ**

« » __________ 2020թ. N__________

**Ի կատարումն ՀՀ Վարչապետի**
**12.06.2020թ. թիվ 02/05.2/28537-2020**
**հանձնարարականի**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ՊԱՐՈՆ Տ. ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Գալստյան**,

ՀՀ կառավարությանն ուղղված՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտակ Մանուկյանի կողմից պահանջվող՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկում ավանդների և ներքին շահող փոխառության պարտատոմսերի (միայն ՀՀ-ում գրանցված) վերաբերյալ առանձնացված վիճակագրություն՝ շահառուների թվաքանակի ընթացիկ գնահատականի մասին, տեղեկություն ՀՀ ֆինանսների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններում առկա չէ:

Սակայն տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ից (այսուհետ՝ Բանկ) ստացել է նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում (այսուհետ՝ Հայխնայբանկ) գործող ավանդների քանակի և նախկին ԽՍՀՄ ռուբլով արտահայտված գումարային ընդհանուր ծավալի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունը:

Միևնույն ժամանակ Բանկը հայտնել է, որ Հայխնայբանկում ներդրված ավանդների քանակի և ավանդների նախկին ԽՍՀՄ ռուբլով արտահայտված գումարային ընդհանուր ծավալի վերաբերյալ տեղեկատվությունը կարող են տրամադրել

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
**http://www.mlsa.am info@mlsa.am**

տարեկան կտրվածքով, քանի որ տարեկան կտրվածքով է իրականացվել Հայխնայբանկում ավանդների քանակային և գումարային հաշվառումը, և տարվա առանձին օրերի համար հաշվետվություններ առկա չեն եղել: Համապատասխանաբար ստորև ներկայացված են 01.01.1993 թ. և 01.01.1994 թ. դրությամբ ավանդների քանակի և ավանդների ընդհանուր ծավալի վերաբերյալ տեղեկությունը՝

| Ամսաթիվ | Ավանդների քանակ /հատ/ | Ավանդների՝ նախկին ԽՍՀՄ ռուբլով արտահայտված գումարային ընդհանուր ծավալ |
|---|---|---|
| 01.01.1993 թ. | 3,952,300 | 10,814,834,300 |
| 01.01.1994 թ. | 4,030,652 | 40,818,843,902 |

Բանկը տեղեկացրել է նաև, որ Բանկի կողմից կատարված վերլուծություններով և հաշվարկներով՝ 10.06.1993 թ. դրությամբ նշված ավանդների մնացորդները կարող էին կազմել մոտ 4 մլն քանակով ավանդ՝ մոտ 11,5 մլրդ դրամ ԽՍՀՄ ռուբլի ընդհանուր ծավալով, որոնք, սակայն, մոտավոր հաշվարկներ են:

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ձ. ԲԱԹՈՅԱՆ

**Կատարող՝ ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչություն**
**հեռ.՝ (010) 52 87 79**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«____» ____________ 20 թ.

No ________________

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ՊԱՐՈՆ ԱՐՏԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Ի կատարումն 02.04.2020թ.
թիվ 02/05.7/13323-2020 հանձնարարականի

Հարգելի՛ պարոն Մանուկյան,

Ձեզ եմ տրամադրում գրությամբ հայցվող հարկ վճարողների կողմից 2020 թվականի հունվար, փետրվար ամիսների առևտրաշրջանառության ծավալների մասին տեղեկատվություն՝ համաձայն 25.03.2020թ. դրությամբ ՀՀ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական շտեմարանում առկա տվյալների:

Առդիր՝ 1 էլեկտրոնային փաստաթուղթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ ՏՏ վարչություն
Է.Համբարձումյան, հեռ. (060) 544-942

| | հունվար | փետրվար |
|---|---|---|
| Տպված/Տրամադրված ՀԴՄ կտրոնների ընդհանուր քանակը, հատ | 35,572,614 | 39,706,130 |
| Տպված/Տրամադրված ՀԴՄ կտրոնների ընդհանուր քանակը Երևանում, հատ | 27,316,789 | 30,287,413 |
| Տպված/Տրամադրված ՀԴՄ կտրոններով շրջանառության ծավալը՝ ֆիսկալ հասույթի տվյալների հիման վրա, **մլն. դրամ** | 132,843 | 147,182 |
| Տպված/Տրամադրված ՀԴՄ կտրոններով շրջանառության ծավալը Երևանում ՝ֆիսկալ հասույթի տվյալների հիման վրա, **մլն. դրամ** | 110,552 | 122,570 |

**Նշում**՝ Սույն տեղեկատվության մեջ արտացոլված են միայն նոր սերունդի ՀԴՄ-ի վերաբերվող կտրոնների քանակը և այդ ՀԴՄ-ների ֆիսսալ հասույթը (ֆիսկալ հասույթ=վաճառք+օգտագործված կանխավճար-վերադարձ)

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻԵՎՍՈՑԻԱԼԱԿԱՆՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

« »__________ 2020 թ. N____________________

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ՊԱՐՈՆ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

**Հարգելի՛ պարոն Մանուկյան,**

Ի կատարումն ՀՀ Վարչապետի 18.03.2020 թ.-ի թիվ 02/05.1/9396-2020 հանձնարարականի՝ ստորև ներկայացվում է ՀՀ Կառավարության 03.11.2016 թ.-ի N1122-Ն որոշմամբ սահմանված կարգով 2019 թվականին էլեկտրական էներգիայի և բնական գազի սպառման համար նվազ սակագնով վճարման իրավունքից օգտված ընտանիքների թվաքանակի, ինչպես նաև սպառած չափաքանակների վերաբերյալ տեղեկատվությունը՝ եռամսյակային կտրվածքով:

| Ուղղություն | 2019 թ. 1-ին եռամսյակ | | 2019 թ. 2-րդ եռամսյակ | | 2019 թ. 3-րդ եռամսյակ | | 2019 թ. 4-րդ եռամսյակ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընտանիքների թիվ | Ընդհանուր օգտագործման ծավալ (խ.մ. կամ հազ.կՎտ.ժ) | Ընտանիքների թիվ | Ընդհանուր օգտագործման ծավալ (խ.մ. կամ հազ.կՎտ.ժ) | Ընտանիքների թիվ | Ընդհանուր օգտագործման ծավալ (խ.մ. կամ հազ.կՎտ.ժ) | Ընտանիքների թիվ | Ընդհանուր օգտագործման ծավալ (խ.մ. կամ հազ.կՎտ.ժ) |
| Գազ | 72782 | 18152462 | 76538 | 6399388 | 78951 | 4431421 | 81492 | 5249901 |
| Էլ. էներգիա | 98115 | 56700731 | 97021 | 42051240 | 95775 | 41947424 | 94952 | 50753287 |

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Զ. ԲԱԹՈՅԱՆ

Կատարող՝ սոցիալական
աջակցության վարչություն, 060 652 637

0010, ք. Երևան, Կառավարականտուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.aminfo@mlsa.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

«      »__________ 2020թ.                                                  N__________

**Ի կատարումն ՀՀ Վարչապետի**
**12.06.2020թ. թիվ 02/05.2/28537-2020**
**հանձնարարականի**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ՊԱՐՈՆ Տ. ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Գալստյան,**

ՀՀ կառավարությանն ուղղված՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտակ Մանուկյանի կողմից պահանջվող՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկում ավանդների և ներքին շահող փոխառության պարտատոմսերի (միայն ՀՀ-ում գրանցված) վերաբերյալ առանձնացված վիճակագրություն՝ շահառուների թվաքանակի ընթացիկ գնահատականի մասին, տեղեկություն ՀՀ ֆինանսների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններում առկա չէ:

Սակայն տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ից (այսուհետ՝ Բանկ) ստացել է նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում (այսուհետ՝ Հայխնայբանկ) գործող ավանդների քանակի և նախկին ԽՍՀՄ ռուբլով արտահայտված գումարային ընդհանուր ծավալի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունը:

Միևնույն ժամանակ Բանկը հայտնել է, որ Հայխնայբանկում ներդրված ավանդների քանակի և ավանդների նախկին ԽՍՀՄ ռուբլով արտահայտված գումարային ընդհանուր ծավալի վերաբերյալ տեղեկատվությունը կարող են տրամադրել

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3   հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
**http://www.mlsa.am   info@mlsa.am**

տարեկան կտրվածքով, քանի որ տարեկան կտրվածքով է իրականացվել Հայխնայբանկում ավանդների քանակային և գումարային հաշվառումը, և տարվա առանձին օրերի համար հաշվետվություններ առկա չեն եղել: Համապատասխանաբար ստորև ներկայացված են 01.01.1993 թ. և 01.01.1994 թ. դրությամբ ավանդների քանակի և ավանդների ընդհանուր ծավալի վերաբերյալ տեղեկությունը՝

| Ամսաթիվ | Ավանդների քանակ /հատ/ | Ավանդների՝ նախկին ԽՍՀՄ ռուբլով արտահայտված գումարային ընդհանուր ծավալ |
|---|---|---|
| 01.01.1993 թ. | 3,952,300 | 10,814,834,300 |
| 01.01.1994 թ. | 4,030,652 | 40,818,843,902 |

Բանկը տեղեկացրել է նաև, որ Բանկի կողմից կատարված վերլուծություններով և հաշվարկներով՝ 10.06.1993 թ. դրությամբ նշված ավանդների մնացորդները կարող էին կազմել մոտ 4 մլն քանակով ավանդ՝ մոտ 11,5 մլրդ դրամ ԽՍՀՄ ռուբլի ընդհանուր ծավալով, որոնք, սակայն, մոտավոր հաշվարկներ են:

X

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **Զ. ԲԱԹՈՅԱՆ**

**Կատարող՝ ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչություն**
**հեռ.՝ (010) 52 87 79**